



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
22 ապրիլի 2016 թվականի N 10 - Ա

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ 5-ՐԴ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱԶԱՏՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ /ՏԱՐԱԾՔԸ/ ՀԱՆՁՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2016թ.փետրվարի 18-ի թիվ 01/18/822-16 գրությունը՝

կարգադրում եմ.

1. Ստեղծել ՀՀ կառավարության 2006թ.նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման 5-րդ կետի համաձայն առողջապահական համակարգի օպտիմալացման արդյունքում ազատված անշարժ գույքը/տարածքը/ հանձնող հանձնաժողովը հետևյալ կազմով.  
Ս.Քամայան - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ)  
Մ.Մելքունյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ  
Ա.Հարությունյան - „ Բերդի ԲԿ “ ՓԲԸ տնօրեն  
Օ.Թումանյան - „ Բերդի ԲԿ “ ՓԲԸ գլխավոր հաշվապահ  
Ս.Մելիքյան - „ Բերդի ԲԿ “ ՓԲԸ տնտեսվար
2. Հանձնաժողովին՝ օրենքով սահմանված կարգով իրականացնել ՀՀ կառավարության 2006թ.նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման 5-րդ կետի համաձայն առողջապահական համակարգի օպտիմալացման արդյունքում ազատված անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնման աշխատանքները:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ

22 ապրիլի 2016թ.  
ք. Իջևան